

Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ի ռեկտոր,
պրոֆեսոր Արմեն Աբգարի Մուրադյանին
ՀՀ քաղաքացի Մարիա Ջալալյանից

Շնորհակալագիր


Ես՝ Մարիա Ռաֆիկի Ջալալյանս, ցանկանում եմ իմ շնորհակալությունը հայտնել Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի միկրովիրաբուծության բաժանմունքի բժշկական անձնակազմին և անձամբ բժշկուհի Թեհմինե Համայակի Ասատրյանին:

2022թ.-ի հուլիսի 30-ին ես ու ամուսինս դեպի ք. Եղեգնաձոր ընթանալիս ենթակվեցինք ինքնավթարի: Ժամանած Եղեգնաձորի Շտապ օգնության բրիգադի օգնությամբ ինձ շտապ տեղափոխեցին համալսարանական հիվանդանոցի միկրովիրաբուծության բաժանմունք: Ունեի ձախ դաստակի ջնջիված վերքեր և դաստակի ոսկրերի բազմաթիվ կոտրվածքներ, նաև գլխի թեթև վնասվածք:

Հետազոտություններից հետո բժիշկների մոտ առաջացել էր դաստակի պահպանման հարցը: Թեհմինե Համայակովյան իր թիմով կատարեց երկարաժամ և շատ բարդ վիրահատություն՝ փրկելով ձախ դաստակս (ամպուտացվեց ցուցամատս, կոտրվածքները ֆիքսվեցին շյուղերով): Քանի որ բաց էին ոսկորները և նեկրոզված էին ամբողջ փափուկ հյուսվածքները, դաստակը պահպանելու նպատակով շաբաթներ շարունակ դրվեց վակուումային սարք, որպեսզի չինֆեկցվեին ոսկրերը, և ավելի ուշ հնարավոր եղավ դեֆեկտը փակել մաշկի տրանսպլանտացիայով: Ինքս բժիշկ լինելով՝ գիտակցել եմ դաստակիս վրա կատարված ահռելի աշխատանքը, վստահել բժշկուհուս՝ Թեհմինե Համայակովյանին, համբերատար կատարել եմ ինձանից պահանջվող ամեն ինչ, և արդյունքն ուղղակի ակնհայտ է:

Այժմ ես գտնվում եմ վերականգնողական փուլում:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում համալսարանական հիվանդանոցի միկրովիրաբուծության բաժանմունքի ղեկավար՝ Արտավազ Բագրատի Սահակյանին, ով ունի իրենից հետո այս ծանր մասնագիտությունը արժանի շարունակողներ:



Երախտիքի խոսքս եմ ուղղում ինձ վիրահատող բժշկուհի Թեհմինե
Համայակի Ասատրյանին, ով հիացնում է իր մասնագիտական վարպետությամբ,
գիտելիքներով, ինտելեկտով և մեծ հոգատարությամբ: Շատ գոհ ու շնորհակալ եմ
նաև կլինիկական օրդինատորներից՝ իրենց աշխատասիրության ու գիտելիքների
համար: Նրանց ղեկավարը՝ Թեհմինե Համայակովնան խստապահանջ էր և
միեւնոյն ժամանակ ուներ ընկերական վերաբերմունք: Ուզում եմ նույնպես նշել
փորձառու բուժքույրերի հոգատարությունն ու աշխատանքի հանդեպ
պատասխանատվությունը:

Ես հպարտ եմ, որ մեր հայրենիքում աշխատում են այսպիսի բարձրակարգ,
ազնվաբարո մասնագետներ, մեծատառով ԲԺԻՇԿՆԵՐ:

Հարգանքներով՝

Մարիա Ռաֆիկի Ջալալյան

